ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"3" մարտի 2011թ. №25-Ա

ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1795-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011 թվականի մարտի 2-ի N01/19/1185-11 հանձնարարականի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համարժեք կատարման նպատակով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանին նշանակել ազգային փոքրամասնությունների հարցերով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատասխանատու:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. մարտի 3
ք. Կապան